



Ի՞նչ է վարկային պատմությունը

Վարկային տեղեկատվության շրջանառության և վարկային բյուրոների գործունեության մասին ՀՀ օրենքի համաձայն վարկային տեղեկատվությունը, վարկային տեղեկատվության սուբյեկտի կողմից ստանձնած պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվությունն է, որը ցույց է տալիս վարկային տեղեկատվության սուբյեկտի պարտքերը, վճարումները, վճարումների սովորությունները կամ պարտավորությունների կամ դրանց կատարման վերաբերյալ տեղեկատվություններ, որոնք հաշվի են առնվում ֆինանսական կազմակերպությունների կողմից վարկերի տրամադրման, ինչպես նաև արտադրող և վաճառող կամ ծառայություններ մատուցող կազմակերպությունների կողմից՝ տարաժամկետ վճարման սկզբունքով (ապառիկ) ապրանքների/ծառայությունների իրացման վերաբերյալ որոշում կայացնելու ընթացքում:

Վարկային պատմության կարևորությունը

Նախկինում դրսևորած վատ վարկային պատմությունը կարող է հիմք հանդիսանալ նոր ստացվող վարկերի պայմանների խստացման կամ ընդհանրապես չտրամադրման համար:

Վարկային զեկույցը գրավոր կամ էլեկտրոնային փաստաթուղթ է, որը պարունակում է վարկային տեղեկատվության սուբյեկտի (ֆիզիկական կամ իրավաբանական) և նրա կողմից ստանձնած տնտեսվարող կազմակերպությունների նկատմամբ ֆինանսական պարտավորությունների կատարման վերաբերյալ տեղեկություն:

Զեկույցը կազմված է ԱՔՌԱ անդամ կազմակերպություններից հարցման պահի դրությամբ ստացված տվյալների հիման վրա և արտացոլում է հարցմանը նախորդող վերջին 5 տարվա վարկային տվյալները:

ԱՔՌԱ-ն վարկային բյուրո է, որը համագործակցում է ՀՀ-ում գործող բոլոր բանկերի և վարկային կազմակերպությունների հետ:

Կիրառվող սքորի տեսակները

Արդշինբանկ ՓԲԸ-ում վարկարժանության գնահատման գործընթացում կիրառվում են արքա վարկային պատմությունը, ՖԱՅԿՈ սքոր գնահատականը և Բանկի ներքին սքորինգային մեխանիզմը:



Ի՞նչ է վարկային սքոր գնահատականը

ՖԱՅԿՈՒ Սքորը, ԱԲՈԱ Քրեդիտ Ռեփորթինգ ՓԲ և Ֆեյր Այգաք Սերվիսիզ Լիմիթիդ ընկերությունների կողմից համատեղ մշակված սքորինգային համակարգ է, որը վիճակագրական ուսումնասիրության և վերլուծության ենթարկելով հաճախորդի վարկային պատմությունը, տալիս է վարկառուի վարկային ռիսկի (վարկարժանության) թվային գնահատականը՝ որպես սպառողական կրեդիտավորման ռիսկի մակարդակի չափորոշման առանցքային գործիք:

Համապատասխան տեղեկատվություն տեղեկատվություն ներկայացված է նաև abcfinance.am և acra.am հասցեներում:

Սքորի վրա ազդող հիմնական գործոնները

ՖԱՅԿՈՒ սքորի հաշվարկման մոդելի համաձայն սքորի վրա ազդող բնութագրիչներն են՝

1. Վճարումների (մարումների) պատմություն,
2. Վարկային բեռի մեծություն,
3. Վարկային պատմության երկարություն
4. Օգտագործված փոխառությունների տեսակներ, Նոր վարկային դիմում:

Բանկի ներքին սքորինգային մեխանիզմի վրա ազդում են՝

1. Բանկային և ավանդային հաշիվների, դրանցով կատարված գործարքների ու փոխանցումների վերաբերյալ տեղեկատվություն,
2. Վարկային պատմության վերաբերյալ տեղեկատվություն,
3. Եկամուտների ու աշխանքային փորձի վերաբերյալ տեղեկատվություն,
4. Ընտանեկան կարգավիճակի ու կրթության վերաբերյալ տեղեկատվություն
5. Անշարժ ու շարժական գույքերի սեփականության վերաբերյալ տեղեկատվություն,
6. Այլ պարտավորությունների սպասարկման վերաբերյալ տեղեկատվություն,
7. Հաճախորդին բնութագրող այլ տեղեկատվություն:

Սքոր գնահատականի վրա վարկային հարցման ազդեցությունը



Վարկային հարցումների քանակը կարող է բացասական ազդեցություն ունենալ վարկային ամփոփ գնահատականի վրա: Եթե հարցումը կատարվում է մոնիթորինգի շրջանակներում, ապա բացասական ազդեցություն չի ունենում:

Ինչպե՞ս խուսափել վարկային պատմության և սքոր միավորի վատթարացումից

1. Վարկային պարտավորությունները կատարել պատշաճ եղանակով՝ առանց ուշացումների՝ սահմանված ժամանակացույցի համաձայն:
2. Խուսափել կասկածելի կամ վատ վարկային պարմություն ունեցող վարկառուների պարտավորությունների գծով որպես համավարկառու և/կամ երաշխավոր լինելուց և այլն,
3. Վճարային տերմինալներով վարկի պարտավորությունների մարումներ անելիս հաշվի առնել, որ Բանկի գործառնական ժամից՝ 16:45-ից, հետո կատարված վճարումները տեխսփոխվում են հաջորդ աշխատանքային/գործառնական օր և վճարումը համարվում է կատարված հաջորդ օրը:

Ինչպե՞ս բարելավել վարկային պատմությունը և սքոր միավորը

1. Մարել ժամկետանց պարտավորությունները, եթե այդպիսիք առկա են,
2. պատշաճ, առանց ուշացումների կատարել վարկային պարտավորությունները և բացառել ընթացիկ վարկերի գծով պարտավորությունների կատարման նույնիսկ մեկօրյա ուշացումները,
4. խուսափել ապագայում անվստահելի անձանց համար երաշխավոր դառնալուց:

Ու՛ր դիմել, եթե վարկային պատմությունը սխալ է

Եթե վարկառուի վարկային պատմության մեջ առկա են սխալ կամ թերի տվյալներ, ապա պարզաբանման և ուղղման նպատակով վարկառուն՝

1. համաձայն «Վարկային տեղեկատվության շրջանառության և վարկային բյուրոների գործունեության մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի դրույթների, կարող է այդ մասին տեղեկացնել վարկային բյուրոյին կամ ուղղակիորեն դիմել տեղեկատվություն տրամադրող սուբյեկտներին (վարկային տեղեկատվության աղբյուրին): Տեղեկացումը կարող է իրականացվել համապատասխան գրավոր դիմում վարկային բյուրոյին ներկայացնելու միջոցով կամ էլեկտրոնային եղանակով՝ առցանց ռեժիմում Իմ ԱՔՌԱ անձնական գրասենյակից: ԱՔՌԱ-ի կողմից տրամադրված վարկային զեկույցների վերաբերյալ հաճախորդների բողոքների ընդունման/ստացման, քննարկման և վերջիններիս արձագանքման գործընթացը, գործողությունների հաջորդականությունը սահմանվում է «ԱՔՌԱ



Քրեդիտ Ռեփորթինգ» ՓԲԸ-ի [«Վեճերի լուծման ընթացակարգ»-ով](#):
Համապատասխան տեղեկատվություն ներկայացված է նաև [abcfinance.am](#) և [acra.am](#) հասցեներում:

2. Կարող է դիմել Բանկին՝

- Բանկի պաշտոնական office@ardshinbank.am էլեկտրոնային հասցեին գրություն ուղարկելու միջոցով,
- Շուրջօրյա գործող Բանկի հեռախոսային կենտրոն զանգահարելու միջոցով /հեռ. 012222222/,
- Բանկի ցանկացած մասնաճյուղում գրավոր դիմում/բողոք/խնդրանք/հարցում ներկայացնելու միջոցով: